



ԶԱՎԵԼ ԵՍԱՄՅԱՆ

Երբ այլևս չեն սիրեր

Տազնապը

Խաչիկ անձնատուր եղեր էր իր յուսահատութեան եւ քանի՛ օրերը կ'անցնէին, ա՛յնքան այդ յուսահատութիւնը դառն ու դաժան կը դառնար. անոր խոժոռ դէմքին վրայ այլ եւս երբեք ժպիտը չէր երեւար ու անիկա կ'անցնէր փողոցներէն հետզհետէ աւելի խորասուզուելով իր մոայլ տրամադրութիւններուն մէջ: Ո՞ր կ'երթար, ի՞նչ կ'ընէր... ոչ ոք գիտէր, ինքն ալ չէր գիտէր. կ'երթար մօտակայ դաշտերը եւ բլուրները, կարծես փախչելով իր սեփական ցաւէն. կարծես կը փափաքէր որ օր մը, վերջապէս մոլորելով իր ամենօրեայ ճամբաներէն՝ ուրիշ ճամբաներու մէջ իյնար, հեռանար իր դժբաղդութեան սեւեռակէտէն ու այլեւս չգտնար իր ծանօթ թաղերը, ուր ամէն մէկ փողոցի անկիւն, ամէն մէկ պատուհան, ամէն մէկ քար, կա՛մ իր ցաւը կը հեզնէր եւ կամ գայն կ'աղաղակէր բարձրագոյն:

Եկան օրեր երբ եղերական ձայներ, ոճիրի հրաւերներ պաշարեցին զինքը. գառանցական գիշերներու մէջ ելաւ կանգնեցաւ, խարխափելով գնաց մինչեւ դուռը եւ փնտռեց ինքնիրեն թէ ի՞նչ անդիմադրելի բնագոյն զինքը կը մղէր դէպի հոն դէպի իր սիրականը որ այլևս չէր սիրեր զինքը: Երբեմն ալ վատթարացած, տժգոյն եւ դաժան, յօնքերը պոստած իր սեւ եւ խիստ աչքերուն վրայ, հոգեկան թուլութիւններու անձնատուր եղաւ. անիկա ճաշակեց գաղտնաբար արտասուելու, հեծեծանքները խեղդելով արտասուելու խորունկ եւ տխուր քաղցրութիւնը եւ երբ զգաց թէ իր սիրտը ճնշուած էր ահագին եւ ճմլող բեռի մը տակ, գիտակցեցաւ որ շա՛տ, շա՛տ տատապելու այդ կարողութիւնը կը

յայտնաբերէր իր խառնուածքին հզօր ազնուականութիւնը: Այս պատճառաւ էր թերեւս որ անհկա անմիջապէս չմղուեցաւ ո եւ է գաղթակցութիւն ընելու, ինչպէս կը սպասուէր իրմէն. անհկա ինքզինքին անարժան համարեց երթալ նոյն իսկ իր նախկին նշանածին ցուցադրել իր մեծ վիշտը ու գոռ եւ բռնատր հպարտութիւն մը բարձրանալով իր խորտակուած երագներուն մէջէն գորավիզ եղաւ իրեն, զինք կազդուրեց ու պահպանեց ծայրայեղ վարմունքներէ:

Բայց երբեմն իր հոգին ու մարմինը կը տկարանային. կարծես ուրիշ անձ մը կը ցցուէր յանկարծ իր տառապանքով մաքրագործուած էութեան մէջէն ու անհկա էր կարծես բուն իսկ ինքը. ընտանի էր ասոր կերպերուն, բառերուն, հայոյութիւններուն. գէշ օրեր էին ատոնք: Առաւօտէն մինչեւ իրիկուն Խաչիկ, որ այլ եւս հրաժարած էր որ եւ է աշխատութենէ, քէօն գինով, կը հայիոյէր ու կը խմէր մինչեւ որ գինեպանները զինքը վտարէին իրենց կրպակներէն. վա՛յ անոր, որ համարձակէր հեռաւոր ակնարկութիւն մը ընել իր վիշտին, իր սիրած աղջկան, առանց ասոր ալ կռիւ կը փնտռէր արդէն, ակռաները կը կճրտացնէր ու այնպիսի կատաղութիւնով մը լեցուն կ'ըլլար որ ամէնէն խապատայինները հեռու կը կենային. յաճախ սակայն, ինքը կ'ըլլար նախայարձակը ու այս շան կռիւներէն հագուստները պատռտած, աչքերը մոլորուն, շրթները սպառնալիքներով դողդողջուն, ձեռները պատրաստ հարուածելու, կ'անցնէր փողոցներէն՝ արձակելով իր եղերական, դժնդակ ու երկարաձիգ նաղարան, չարագուշակ վային մը պէս:

Շատերը մանաւանդ իր արհեստակիցները կը մեղքանային զինքը եւ մեծ համբերութեամբ կը կրէին իր էրած սրտով մարդու կռուագանութիւնները, հայիոյութիւնները եւ նոյն իսկ հարուածները. սրտառուչ համերաշխութեամբ մը զինքը կը պարուրէին խնամքով եւ գորովանքով, իսկ տարեցները կը փորձէին գայն մխիթարել.

Խաչի՛կ, օղլում, ամենուն գլխէն տաք ու պաղ անցեր է. սիրտդ կէնիշ բռնէ, քեզի պէս կտրիճին թող ձեռքերը պագնեն՝ անանկ աղջկան տան... ան չէ եղեր ուրիշ մը. անուշ աչքը մէկ դէմքի վրայ չվառիր եա՛... պուճախ, պուճախ ինչեր կան տահա... խըսմէթ չէ եղեր ըսէ, վէսսէլա՛մ:

Անհկա կոյրի, հոգեվարքի, գինովի տարտամ եւ շտեսնող նայուածքով մը կը նայէր խօսակցին, գլուխը կը շարժէր եւ եթէ ո եւ է զգացում թափանցէր իր հոգիին, հակազդեցութիւնը այնքան ուժգին կ'ըլլար որ ամբողջ մարմնովը կը դողար ու ակռաները իրար կը զարնուէին:

Այս խորունկ եւ անմխիթարեւի վիշտին հանդէպ ամենքը ալ շուարեր մնացեր էին եւ նոյն իսկ օտարները, ոմանք գինքը մեղքնալով, ոմանք ալ իր գայրոյթներէն սոսկալով, քան մը ըրած չէին անցած դարձածի մասին:

Յակոբճան աղայի կինը երեք շաբաթ է վեր մեռած էր արդէն ու կիրամուտքին իսկ Տիկին Երանիկ ու աղջիկը գացեր էին վարպետին տունը, անոր զոզանչին օգնելու պատրուակաւ: Սկիզբները ոչ ոք անբնական գտաւ ասիկա, նոյն իսկ մեռնողի մայրը հանդուրժեց իրենց ներկայութեան. անոր անյատակ ու խորապէս վշտագին հոգին արդէն այլեւս չէր հետաքրքրուեր աշխարհային իրերով եւ անցուդարձերով ամէն ատենէ աւելի ինքն իր վրայ կզկտուած, անհկա իր կսկիծով մորմնորուն, նոյն իսկ այլ եւս արցունք չունէր թափելիք: Մխիթարութեան բոլոր աղբիւրները չորցեր էին իրեն համար ու նոյն իսկ Աստուած կը բացակայէր իր հոգիէն, որովհետեւ հակառակ իր հինասուրց ջերմեռանդութեան, հաւատքը կը խախտէր ու անհկա կը հեծեծէր երբեմն ոխերիմ շեշտով մը:

Աստուա՛ծ, դուն ի՞նչ ուզեցիր ինծի պէս խեղճ կնիկէ մը, ես ի՞նչ էի ըրեր քեզի որ ինծի ասանկ կրակներու մէջ էրէցի՛ր... ինչի՞ս կ'ապրիմ կոր, ինտո՞ր կ'ապրիմ կոր... ա՛խ, ա՛խ... չոր գլուխս մոռցար, կէնճ ու կանաչ զաւակներս առիր ձեռքէս... ինչո՞ւ տուիր, ինչո՞ւ առիր, ա՛խ... ա՛խ...

Երբ սգաւոր մօրը ձայնը քարձնանար, Երանիկ հանըմ կը փութար քովը, կը ջանար գայն մխիթարել:

Ո՞վ քեզի քան կ'ըսէ, տուտո՛ւ, ցաւդ ծովի պէս մեծ է... ահա, անհկա պարտք մը ունէր, կատարեց, լուսերուն մէջ պառկի, մենք անոնց պիտի երթանք, ամէնքս ալ այդ ճամբուն ճամբորդն ենք. քանի մը տարի առա՛ջ, քանի մը տարի ե՛տք, ի՞նչ ֆարդ ունի... աշխարհս թագաւորներուն չէ մնացէր, ժամ մը առաջ տեղաւորուողը, ազատեր է:

Բայց տուտուն կը մերժէք այս մխիթարանքը. չէ՛, չէ՛, ինքը ինչո՞ւ ամենէն առաջ աղ ճամբան չէր բռներ:

Աչքերս քեօնա՛ն. եավրո՛ւմ... արցունք թափելով հալեցայ, լմնցայ... սիրական աղբարդ առիր պատկեցար, ինծի ինչո՞ւ մինակ ձգեցիր հոս...

Այն ատեն Երանիկ հանրմ գերագոյն ջանքեր կ'ընէր աւելի մեծ դժբաղդութիւններ գտնելու կը ճգնէր, որպէս զի անոնց բաղդատական սաստկութեամբը ամոքէ անմխիթար պատար, ու ակնարկելով արքայի մէջ մեռած երիտասարդի մը, փորձառու եւ գիտակ կնոջ լրջութեամբ, կ'ըսէր եռանդով:

Նորէն, դուք առիք հիւանդնիդ նստեցաք, հոգով մարմնով նայեցաք, բաղաղ բարձի վրայ աչքերը գոցեց, ձեռքովնիդ սուրբ հողը դրիք, ամէն կարգ ու կանոնը պակաս չըրիք: Միհրդատին մայրը հոգի չունի՞ որ ամէն տաղաւարի գերեզմանատուն կ'երթայ, ուրիշներուն մեռելները կ'առնէ կը նստի... գէշէն գէշը կայ, տուտո՛ւ, տահա ինչէ՛ր, ինչէ՛ր կան աս աշխարհիս վրայ... ամէն բան մեզի համար է...:

Յակոբճան աղա մեռելին երկրորդ օրն իսկ իր սովորական խաղաղութիւնը գտեր ու զբաղեր էր գործէրով. երկար ատեն գործերը սակաւ ըլլալէ ետքը, յանկարծ բացուեր էին ո՞վ պիտի մեղադրէր զինքը... լացող ողբով փոր չկշտանար:

Իրիկուրնէ իրիկուն, ա՛լ տաղտկացած զոգանչին տխրութենէն եւ հեծեծանքներէն մինակ կը ձգէր գայն եւ Երանիկ հանրմին ու աղջկանը հետ կը քաշուէին պարտեզին վրայի սենեակը, օղիին ափսէն շտկուած կ'ըլլար. կը խմէին ու հետըզհետէ կը զուարթանային...: Առաջին օրերը Յակոբճան աղա զօրով խմեր էր օղին, պնդեր էին բարեկամները, որպէս զի անոր վիշտը փարատի, ու անիկա խմեր էր լոին ու աչքերը խոնարհած. բայց ես իր մանր աչքերը կը բարձրանային ու կը ժպտէին: Եւ փիմէին ներկայութիւնը տանը սուգը տեւական տօնի մը կը փոխէր. ան ի՛նչ աչքեր էին... օ՛Ֆ, օ՛Ֆ... ու խօսքով կատակներուն յաջորդեցին ձեռքի կատակներ, ամիսներէ, տարիներէ ի վեր Յակոբճան աղա ցաւի ցեցի մէջ էր մնացեր ու հիմակ, հակառակ իր աւշային խառնուածքին ծուլութեանը, տարթանքի անգուսպ խոյանքներ կ'արթնցնէին զինքը: Նոր արիւն մը շրջան կ'ընէր կարծես իր երակներուն մէջ. իր պաղ եւ աննշան աչքերը կը

քաղցրանային ու սովորաբար դանդաղ միտքը այնքան սուրցած էր ո եւ է առիթ չէր փախցնէր ակնարկութիւն մը ընելու, խօսք մը նետելու:

Շաբաթ մը մայր ու աղջիկ, Յակոբճան աղան պարտութիւլ էտքը այնպիսի հրապուրանքի ցանցի մը մէջ, ուրկէ աւելի կորովի մարդիկ իսկ դժուարաւ իրենց հոգին կ'ազատեն ելան տուն դարձան: Ձեռի համար, նորէն բանելու, գործ ուզեցին եւ առանց ուշադրութիւն ընելու տայիին դիտողութիւններուն, սպասեցին: Յակոբճան աղա չէր կրնար այլ եւս իրեցմէ բաժնուիլ: Առաւօտէն մինչեւ իրիկուն սապէս նապէս կ'անցնէր բայց հագի թէ մութը կը կոխէր անոր ոտքերը կ'էրթային դէպի Եւփիմէին տունը. այլ եւս հոգ չէր ընէր ո եւ է պատրուակ փնտռելու իր այցելութեանց. մայր ու աղջիկ առաջուց օղիին ափսէն կը շտկէին, կը դնէին մէջտեղ ու երբ վարպետը կուգար, կը խմէին եւ կը գուարճանային. առաջին օրերը իրենց քրքիչները զսպեցին, բայց հետզհետէ անոնց շեշտը բարձրացաւ, դուռ դրացի իրար անցան: Տային թէն նախապէս դժկամակեցաւ, սակայն հետզհետէ տեղի տուաւ ու դուրսը, իր ընկերներուն աչքին դիրք մը բռնելու համար չէր դադրէր գանգատելէ եւ պախարակելէ, քոյրն ալ վարպետն ալ:

Կնիկ ըսածդ աճայիպ է՛... ի՞նչ խելքի կը ծառայէն, ո՞վ գիտէ...

Վարպետը քրոջդ աղջիկը պիտի առնէ եղե՛ր... անանկ կ'ըսեն կոր.

Տային իբր արհամարհանքի գերագոյն արտայայտութիւն մէկ կողմ կը դառնար. կը թուրնէր եւ ոտքը վրան կը քսէր.

Թո՛ւ... շէքէրը շան բերան ինկեր է. աղջկանը մեղք չէ՞... վարդի ֆիտան կ'ըլմանի...:

Բայց ամենէն աւելի զայրացեր ու փրփրեր էին թաղին կիները, կարծես հասարակաց վնաս մը կար այդ ամուսնութեան մէջ, անոնք ալ մեղադրէին թէ՛ մէկ եւ թէ՛ միւս կողմը:

Շայտէ՛, կը գոչէին արհամարհանքով, ամօթ չէ՞... տահա կնկանը պատանքը չէ պատռած...

Կրկին ամուսնութիւնը թէւ օրէնքով արտօնուած, միշտ անարժան եւ անվայել բան մը համարուած է ժողովուրդին մէջ ու սահկա անանկ խորունկ զգացում մըն է որ Եւփիմէ ու մայրը թէւ կը գայրանային իրենց դէմ ըստածներուն համար, բայց արդարացի կը գտնէին, խորհելով թէ իրենք ալ իրենց կարգին այսպէս պիտի վարուէին, արդէն սկսած էին ընկրկումի շարժում մը ուրուագծել, բայց ա՛լ ուշ էր. ասշափ խօսուելէն ետքը Եւփիմէն ո՞վ կ'առնէր, ու քանի՛ կը զգային թէ աս ու ան իրատունք ունին, այնքան աւելի անպատկառօրէն կը մխրճուէին գայթակղութեան մէջ:

Իրիկուն մը, Խաչիկ որ իր գէշ օրերէն մէկուն, գէշ մէկ ժամուն մէջ կը գտնուէր, անսպասելի կերպով իմացաւ պատահաձր. հովարտային մէկը գինետուն մտնելով եւ Խաչիկը գտնալով հոն գրեթէ նստարանին վրայ գլտորած, գնաց մօտը, դրդեց գայն ու անոր քնատ աչքերուն մէջ նայելէն, որոնք օղիէն թէ վիշտէն մարած էին, ըսաւ յանկարծ...

Օօ՛, Խաչի՛կ, քուկինիդ տունին ատաշքէն անցայ, հարսնի՞ք ունին ի՞նչ ունին, վերէն վար տունը լուսերու մէջ կը վառէր կոր:

Գինետան մէջ պահ մը խոր լռութիւն տիրեց ու ամենուն աչքերը ուղղուեցան դէպի Խաչիկը՝ տակալի պոռթկումի մը սպասելով. բայց անհկա իր ծանր ու ընդարմացած գլուխը կրկին դրաւ սեղանին վրայ. ոչ իսկ հառաչանք մը արձակեց. իր խոպոտ եւ հեւացող շնչառութիւնը կարծել կուտար թէ կը քնանայ. պահ մը ետքը գայն մոռցան ու ամէն մէկը զբաղեցաւ իր տէրտը մարեցնել օղիի մէջ. ժամ մը անցաւ, Էրեւս աւելի. շատերը արդէն մէկնած էին, կը մնային գինետան մէկ քանի հաւատարիմները. ոմանց դէմքերը մոայլ ու խոժոռ էին, բայց մէկ երկուքին գուարթութիւնը աղմուկով եւ եռանդով կը լեցնէր սրահը. երբեմն մոռցուած անկիւնէ մը խորունկ եւ սրտագին հառաչանք մը կ'արձակուէր, «օ՛ֆ... օ՛ֆ...» երբեմն ալ թրքական երգի ծուէն մը դողդողալով կ'երկարաձգուէր ծուխով եւ անախորժ հոտերով տոգորուած սրահին մէջ:

Յանկարծ, Խաչիկ, զսպանակէ մը մղուածի պէս ելաւ, կանգնեցաւ, ուզեց քալել, բայց իր թուլիկ սրունքներուն վրայ դեղեկեց ու մէկ կողմին ծռած՝ լորձունքոտ բերանը անհասկնալի վանկեր թոթովեց. բայց անհկա իր առաջին տկարութեան յաղթահարելով, իրանը օրերելէն կանգնեցաւ, մէջքին գօտին սեղմեց, աչքերը

Չրջեց գառանցող մարդու պէս ու նետուեցաւ փողոց... անհկա կը քալէր, ինչպէս կը քալէն երագի մէջ. կգակը սեղմած, բռունցքները պնդացուցած ու ամբողջ էութիւնը պրկած գերագոյն ճիգի մը մէջ. ու անհկա կ'երթար առանց գիտնալու թէ ո՞ր, առանց գիտնալու թէ ի՞նչ բանի, բայց անհկա կ'երթար. համոզուած որ այլեւս աշխարհիս վրայ ոչ մէկ տեսակ ուժ չէր կրնար գինքը կեցնել...